կարող, թէեւ լուսանկարած ենք բաւական մանրամասնութեամբ, որ մնացել է էջմիածնում: Սրանց մոտիւները եւ մանրանկարչական տառերը նոյն են Հայաստանի ձեռա-



Պատկ. 9.— Երուս. No. 1956, Ցա., 1265 Թուի

գիրների հետ, ինչ որ նաեւ Տիւբինգենի Աւետարանի մէջ: Խորանազարդերից մէկում կրկնւում է երկգլխանի եւ չորքոտանի արծիւը, որ ունի եւ Սեբաստիայի 1066 Թուի Ա-

ւետարանը Ակոռեցի Գրիգոր երէցի ձեռքով գրուած եւ նկարազարդուած:*

Հայաստանի նոյն իսկ աւելի ուշ ԺԳ. դարի առաջին կէսի աւետարաններ պահել են

---

*Ձեռ. էջմ. 369. Արարատ. 1910. մեր յօդուածը «Նախնեաց Յիշատակներ» կամ մեր Խաղբակեանք կամ Պռոշեանք. 1928. 176–177: